ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2019 թվականի N: 26-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎԱՆԻԿ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N:1792-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության» 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Վանիկ Սերոբյանի 2019 թվականի փետրվարի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վանիկ Սերոբյանին 2019 թվականի փետրվարի 18-ից ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդականի պաշտոնից՝ լուծելով 2018 թվականի հունիսի 6-ին նրա հետ կնքված N:23 աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է